Կազմված է 25.01.2012թ.
Բաղկացած է 24 էջից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ ___

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
25.01.2012թ.

ԹԻՎ 5/2-Լ ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

_____

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ ____ _____ _____ թ.

գրանցման համար՝ _____
վկայական՝ ___ _____
հարկ վճարողի հաշվառման համար՝
_____

պետական ռեգիստրի ղեկավար՝

_____ _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
Հ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ Ի
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետություն,
քաղաք Երևան
2012թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Հայաստանի Հանրապետության Փաստաբանական Դպրոց» Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ կամ Փաստաբանական դպրոց) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որը հետապնդում է գիտական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ:

1.2 Փաստաբանական դպրոցը գործում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Փաստաբանական դպրոցի իրավական կարգավիճակի, հիմնադրման, կառավարման մարմինների, կանոնադրության, լուծարման, գույքի օգտագործման, ինչպես նաև այլ հարցեր կարգավորվում են «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված առանձնահատկությունները:

1.4 Այն բոլոր հարցերը, որոնք սույն կանոնադրությամբ չեն կարգավորվել, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.5 Փաստաբանական դպրոցը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված միակ հիմնադիր Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Փաստաբանների պալատ կամ Հիմնադիր) կողմից (պետական գրանցման տվյալները՝վկայական 03 Ա 070122, գրանցման համարը՝ 211.174. 03619, 27.10.2005թ., տրված՝ իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից, գտնվելու վայրի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Զաքիյան փողոց, թիվ 3-րդ շենք: Փոստային դասիչ՝ 0010):

1.6 Փաստաբանական դպրոցի անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» Հիմնադրամ,
հայերեն կրճատ՝ «ՀՀ փաստաբանական դպրոց» Հիմնադրամ,
ռուսերեն լրիվ՝Фонд ”Школа Адвокатов Республики Армении”
ռուսերեն կրճատ՝ Фонд ”Школа Адвокатов РА”
անգլերեն լրիվ՝"School of Advocates of the Republic of Armenia " FOUNDATION
անգլերեն կրճատ՝ "School of Advocates of the RA" FOUNDATION

1.7 Փաստաբանական դպրոցն ունի իր անվանումը պարունակող կլոր կնիք (հայերեն և անգլերեն լեզուներով):

1.8 Փաստաբանական դպրոցի գտնվելու վայրի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Զաքիյան փողոց, թիվ 3 շենք: Փոստային դասիչ՝ 0010 :

1.9 Փաստաբանական դպրոցի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

II. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Փաստաբանական դպրոցի հիմնական նպատակներն են՝

1) ապահովել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման ուսուցումը և փաստաբանների շարունակական մասնագիտական վերապատրաստումը.
2) ապահովել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունների անցկացումը.
3) նպաստել Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և փաստաբանի դերի բարձրացմանը.
4) համալրել Փաստաբանների պալատը մասնագիտորեն պատրաստված անդամներով.
5) նպաստել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների գիտակրթական մակարդակի բարձրացմանը.
6) իրականացնել ժամանակակից գիտատեխնիկական և դասավանդման մեթոդների կիրառմամբ կրթական ծրագրեր.

2.2 Սույն կանոնադրությանը համապատասխան Փաստաբանական դպրոցը կարող է հետապնդել նաև հետևյալ նպատակները՝

1) նպաստել մարդու իրավունքների պաշտպանությանը և ժողովրդավարական ինստիտուտների կայացմանն ու զարգացմանը.
2) բարձրացնել Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը.
3) նպաստել Հայաստանի Հանրապետության օրենսդրության ուսումնասիրմանը, կատարելագործմանը և համապատասխանեցմանը մարդու իրավունքների և ազատությունների ոլորտի հիմնական կոնվենցիաներին և մյուս միջազգային իրավական փաստաթղթերին.
4) ապահովել Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը, Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի համեմատական վերլուծությունների և փորձաքննությունների կատարումը Փաստաբանական դպրոցում.
5) կազմակերպել իրավաբանների միջազգային հավաքներ, կոնֆերանսներ, սեմինարներ, իրականացնել իրավաբանների փոխանակման ծրագրեր.
6) ապահովել արտերկրում գործող փաստաբանական ուսումնական հաստատությունների, իրավաբանական կազմակերպությունների և իրավաբանության բնագավառի գրահրատարակչական կազմակերպությունների հետ կապը և համագործակցությունը.
7) աջակցել Հայաստանում իրավաբանության ոլորտի գրահրատարակչության զարգացմանը, իրավաբանական գիտական աշխատությունների, ինչպես նաև իրավաբանական գրականության հրատարակմանը և տարածմանը.
8) նպաստել Հայաստանի և սփյուռքի հայ փաստաբանների, փաստաբանական կազմակերպությունների և իրավաբանական ուղղվածություն ունեցող ուսումնական հաստատությունների միջև կապերի հաստատմանը և համագործակցությանը.
9) նպաստել հայկական փաստաբանության պատմահիրավագիտական արժեքների պահպանմանը, ուսումնասիրմանը և տարածմանը.
10) նպաստել բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը՝

բնակչության շրջանում օրենքների և իրավական գիտելիքների քարոզչության միջոցով.

11) օժանդակել իրավաբանական բուհերում և բուհերի իրավաբանական ֆակուլտետներում ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը.
12) նպաստել Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում և այլ կրթական հաստատություններում իրավական գիտելիքների տարածմանը.
13) նպաստել Փաստաբանական դպրոցի ունկնդիրների և փաստաբանների ոչ մասնագիտական շփումներին, կազմակերպել ոչ պաշտոնական ակումբային հանդիպումներ, ինչպես նաև տարաբնույթ մշակութային և ժամանցային միջոցառումներ:

III. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

3.1 Փաստաբանական դպրոցը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացմանը և համապատասխանում է այդ նպատակներին:

3.2 Փաստաբանական դպրոցը սույն կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեությունը կարող է իրականացնել՝ անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

3.3 Փաստաբանական դպրոցը կարող է իրականացնել միայն ձեռնարկատիրական գործունեության ստորև նշված տեսակները՝

1) կազմակերպել և իրականացնել ուսումնական ծրագրեր, այդ թվում ունկնդիրների ուսուցումը ու փաստաբանների վերապատրաստումը.
2) կազմակերպել և անցկացնել սեմինարներ, գիտաժողովներ, կլոր սեղաններ և նմանատիպ այլ միջոցառումներ.
3) իրականացնել փորձագիտական (հետազոտական) ծառայություններ.
4) մշակել իրավական ակտերի նախագծեր.
5) օրենքների և նորմատիվ իրավական ակտերի ոչ պաշտոնական հրատարակում, բազմացում կամ պաշտոնական վերահրատարակում.
6) իրավաբանական մասնագիտական գրքերի, ամսագրերի, թերթերի և այլ պարբերականների մեծածախ և մանրածախ առևտուր, ինչպես նաև դրանց հրատարակություն.
7) գույքի վարձակալություն.
8) հանրային սննդի կազմակերպում:

IV. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

4.1 Փաստաբանական դպրոցի փաստացի շահառուներն են՝

1) Փաստաբանների պալատի անդամ փաստաբանները և օտարերկրյա փաստաբանները.

2) ունկնդիրները.
3) Փաստաբանների պալատը:

4.2 Փաստաբանական դպրոցի հնարավոր շահառուներն են՝ փաստաբանների օգնականները, փաստաբանական գրասենյակների կառավարիչները, իրավաբանները, իրավաբանական ֆակուլտետների ուսանողները և փաստաբանական դպրոցի գործունեությանն առնչվող այլ անձինք:

V. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1 Փաստաբանական դպրոցը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Պետական գրանցման պահից Փաստաբանական դպրոցը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

5.2 Փաստաբանական դպրոցն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու պահից ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:

5.3 Փաստաբանական դպրոցն իրավունք ունի՝
1) անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.
2) հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.
3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.
4) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ.
5) ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից.
6) իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ.
7) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

5.4 Փաստաբանական դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

5.5 Փաստաբանական դպրոցը կարող է համագործակցել ինչպես Հայաստանի Հանրապետությունում պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների և հաստատությունների, այնպես էլ արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, ընկերությունների և ուսումնական հաստատությունների հետ:

5.6 Փաստաբանական դպրոցը ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները:

VI. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Փաստաբանական դպրոցը պարտավոր է՝
1) գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Օրենքին,

«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ օրենքներին ու իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը համապատասխան.

2) «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

3) «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.

4) իր շահառուների կամ իրավասու պետական մարմինների պահանջով հնգօրյա ժամկետում նրանց տրամադրել իր կանոնադրության, ինչպես նաև կանոնադրությունում կատարված լրացումների և փոփոխությունների պատճենները: Նշված փաստաթղթերը այդ անձանց տրամադրվում են անվճար.

5) իրականացնել Օրենքով, «Հիմանադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

6.2 Հայաստանի Հանրապետության օրենքներով կարող են նախատեսվել Փաստաբանական դպրոցի համար նաև այլ պարտականություններ:

6.3 Փաստաբանական դպրոցը չի կարող ստեղծել կամ անդամակցել քաղաքական կամ կրոնական կազմակերպություններին, ինչպես նաև մասնակցել դրանց կառույցների ստեղծմանն ու գործունեությանը:

6.4 Փաստաբանների պալատը պատասխանատվություն չի կրում Փաստաբանական դպրոցի պարտավորությունների համար, իսկ Փաստաբանական դպրոցը պատասխանատվություն չի կրում Փաստաբանների պալատի պարտավորությունների համար:

6.5 Փաստաբանական դպրոցն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

VII. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

7.1 Փաստաբանական դպրոցն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով:

7.2 Փաստաբանական դպրոցի մարմիններն են՝

1) Հոգաբարձուների խորհուրդը՝ Փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Փաստաբանական դպրոցի խորհուրդ).

2) Փաստաբանական դպրոցի տնօրենը:

VIII. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

8.1 Փաստաբանական դպրոցի կառավարման բարձրագույն մարմինը Փաստաբանական դպրոցի խորհուրդն է:

8.2 Փաստաբանական դպրոցի խորհուրդն իրականացնում է Փաստաբանական դպրոցի ընդհանուր կառավարումը և ընթացիկ գործունեության վերահսկողությունը:

8.3 Փաստաբանական դպրոցի խորհուրդը բաղկացած է վեց անդամից: Փաստաբանական դպրոցի խորհուրդը կազմավորվում է փաստաբանների պալատի նախագահից և փաստաբանների պալատի խորհրդի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակված չորս անդամից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկ ներկայացուցչից:

8.4 Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահն ի պաշտոնե Փաստաբանների պալատի նախագահն է:

8.5 Փաստաբանական դպրոցի խորհրդի չորս անդամներին նշանակում է Փաստաբանների պալատի խորհուրդը՝ Փաստաբանների պալատի նախագահի առաջադրմամբ՝ երեք տարի ժամկետով: Սույն կետում նշված չորս անդամներից առնվազն երեքը պետք է լինեն փաստաբաններ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցչի թեկնածությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից:

8.6 Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվելու դեպքում այդ անդամի փոխարեն նշանակվում է նոր անդամ սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով:

8.7 Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստերը կարող են լինել հերթական կամ արտահերթ:

8.8 Փաստաբանական դպրոցի խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի կողմից՝ հաստատված օրակարգով, ըստ անհրաժեշտության, բայց տարեկան չորս անգամից ոչ պակաս:

8.9 Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամները Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստի օրակարգի, նրա աշխատանքն սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին ստանում են առձեռն կամ փոստով (պատվիրված նամակով, էլեկտրոնային փոստով) գրավոր ծանուցում՝ ոչ ուշ, քան նիստի անցկացման օրվանից 3 օր առաջ:

8.10 Փաստաբանական դպրոցի խորհրդի արտահերթ նիստերը կարող են գումարվել Փաստաբանական դպրոցի խորհրդի առնվազն 1/3 անդամների պահանջով, որը ներկայացվում է Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահին: Փաստաբանական դպրոցի խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու պահանջում նշվում են օրակարգի հարցերը և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը: Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահը ստանալով սույն կետով նախատեսված արտահերթ նիստ հրավիրելու պահանջը, պարտավոր է 30 օրացույցային օրվա ընթացքում հրավիրել փաստաբանական դպրոցի խորհրդի արտահերթ նիստ՝ պահանջում նշված օրակարգով: Նշված ժամկետում Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի կողմից Փաստաբանական դպրոցի խորհրդի արտահերթ նիստ չգումարելու դեպքում Փաստաբանական դպրոցի խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել պահանջ ներկայացրած անձանց կողմից՝ նույն օրակարգով:

8.11 Սույն կանոնադրության 8.10-րդ կետով նախատեսված Փաստաբանական դպրոցի խորհրդի արտահերթ նիստ հրավիրելու դեպքում հրավիրողները սույն կանոնադրության 8.9-րդ կետով սահմանված կարգով Փաստաբանական դպրոցի

խորհրդի բոլոր անդամներին են ուղարկում Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահին հրավիրողների կողմից ուղղված պահանջի պատճենը և մեկ փաստաթղթի տեսքով բոլոր հրավիրողների կողմից ստորագրված ծանուցումը՝ ոչ ուշ, քան այդ նիստի անցկացման օրվանից 7 օր առաջ, որտեղ պարտադիր պետք է նշված լինի Փաստաբանական դպրոցի խորհրդի արտահերթ նիստի օրակարգը, անցկացման տեղը, օրը ու ժամը: Սույն պահանջի հիմքով Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստում քվորումի բացակայությամբ նիստ չկայանալու դեպքում, պահանջի օրակարգով հարցերն ընդգրկվում են, քննարկվում և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում Փաստաբանական դպրոցի խորհրդի արտահերթ նիստին անմիջապես հաջորդող նիստում:

8.12 Փաստաբանական դպրոցի խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է անդամների կողմից նիստերին անձամբ մասնակցելու միջոցով:

8.13 Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստն իրավազոր է, եթե հրավիրվել է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում:

8.14 Փաստաբանական դպրոցի խորհուրդն իրավունք չունի շեղվել օրակարգից: Փաստաբանական դպրոցի խորհուրդը կարող է հետաձգել օրակարգում ընդգրկված կոնկրետ հարցի քննարկումը՝ հարցի քննարկման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ խորհրդի անդամների կողմից կատարված դիտողությունները պարզաբանելու նպատակով:

8.15 Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահն իրավունք ունի հարցերի քննարկմանը ներգրավել Փաստաբանական դպրոցի աշխատակազմի անդամներին կամ այլ մասնագետներին:

8.16 Յուրաքանչյուր քվեարկությունից առաջ Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահը կրկնում է քվեարկության դրվող հարցը ճշգրիտ ձևակերպմամբ, հաշվում և բարձրաձայն հայտարարում է կողմ տրված ձայների թիվը, այնուհետև նույն կարգով հաշվում դեմ ու ձեռնպահ ձայների թիվը:

8.17 Փաստաբանական դպրոցի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ:

8.18 Փաստաբանական դպրոցի տնօրենի նշանակման և պաշտոնից ազատման, ինչպես նաև Փաստաբանական դպրոցի անվանման փոփոխության և լուծարման հետ կապված հարցերը լուծվում են Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամների միաձայն որոշմամբ:

8.19 Եթե Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստում քննարկվում է Փաստաբանական դպրոցի խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Փաստաբանական դպրոցի խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

8.20 Քվեարկության արդյունքներն արտացոլվում են Փաստաբանական դպրոցի

խորհրդի նիստի արձանագրության մեջ: Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստերն արձանագրվում են պարզ, թղթային եղանակով՝ հայերեն լեզվով:

8.21 Արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
2) նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց քանակը.
3) նիստին մասնակցած անձանց քանակը, անունները՝ նշելով Փաստաբանական դպրոցում զբաղեցրած պաշտոնը.
4) նիստի օրակարգը.
5) նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները.
6) քվեարկության դրված հարցերը և այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները.
7) նիստի ընդունած որոշումները:

8.22 Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են տվյալ նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

8.23 Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստերի արձանագրություններից քաղվածքները կազմվում են «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8.24 Փաստաբանական դպրոցի խորհրդի որոշումների պահպանման, գրացման և հրապարակման կարգը սահմանվում է Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից հաստատված կարգով և ժամկետներում:

Փաստաբանական դպրոցի խորհրդի և Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի և անդամների իրավասությունները և դրանց դադարման կարգը

8.25 Փաստաբանական դպրոցի խորհրդի իրավասությունները սահմանվում են Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ:

8.26 Փաստաբանական դպրոցի խորհուրդը՝

1) նշանակում և ազատում է Փաստաբանական դպրոցի տնօրենին՝ Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի ներկայացմամբ:
2) հաստատում է Փաստաբանական դպրոցի ռազմավարական ծրագիրը.
3) հաստատում է Փաստաբանական դպրոցի տարեկան բյուջեն՝ ըստ հոդվածների, ինչպես նաև կատարում է դրանում փոփոխություններ՝ փաստաբանական դպրոցի տնօրենի ներկայացմամբ.
4) յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում լսում և հաստատում է Փաստաբանական դպրոցի տնօրենի հաշվետվությունները.
5) հաստատում է ունկնդրի հավակնորդի կողմից վճարվող գումարների չափը, ունկնդիրների ուսման վարձի չափը, դրա վճարման կարգերը.
6) հաստատում է Փաստաբանական դպրոցի բնականոն գործունեությունը ապահովող ներքին իրավական ակտերը, այդ թվում Փաստաբանական դպրոցի աշխատանքային ներքին կանոնակարգը և աշխատակազմի հաստիքացուցակը.

7) Փաստաբանների պալատի խորհրդի հաստատած ուղենիշներին համապատասխան՝ հաստատում է փաստաբանների վերապատրաստման և հավակնորդների ուսուցման ծրագրերը.
8) փաստաբանական դպրոցի տնօրենի ներկայացմամբ քննարկում և լուծում է ունկնդրի հեռացման հարցը.
9) անվավեր է ճանաչում, վերացնում կամ կասեցնում է փաստաբանական դպրոցի տնօրենի ընդունած անհատական կամ ներքին իրավական ակտերը.
10) ձևավորում է Փաստաբանական դպրոցի սույն կանոնադրությամբ չնախատեսված այլ մարմինները.
11) ստեղծում է տնտեսական ընկերություններ կամ մասնակցում է դրանցում, ինչպես նաև ստեղծում է առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ ու ընդունում է դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումներ.
12) ընտրում է Փաստաբանական դպրոցի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի).
13) իրականացնում է Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Փաստաբանական դպրոցի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

8.27 Փաստաբանական դպրոցի խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

8.28 Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամներն իրավունք ունեն՝
1) առաջարկություններ ներկայացնել Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.
2) նախապատրաստել և Փաստաբանական դպրոցի խորհրդի քննարկմանը ներկայացնել հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր.
3) ստանալու տեղեկություններ Փաստաբանական դպրոցի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ.
4) ազատ դուրս գալ Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամությունից.
5) իրականացնել Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8.29 Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության:

8.30 Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամները պարտավոր են՝
1) մասնակցել Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստերին.
2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Փաստաբանական դպրոցի շահերից:

8.31 Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահը՝
1) կազմակերպում է Փաստաբանական դպրոցի խորհրդի աշխատանքները.
2) անրաժեշտության դեպքում կազմավորում է Փաստաբանական դպրոցի խորհրդի ժամանակավոր հանձնախմբեր.
3) գումարում է Փաստաբանական դպրոցի խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
4) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

5) Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանն է ներկայացնում Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.
6) իրականացնում է Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8.32 Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Փաստաբանական դպրոցի խորհրդի որոշմամբ, կատարում է Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամներից մեկը:

8.33 Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի լիազորությունները դադարեցվում են Փաստաբանների պալատի նախագահի լիազորությունները դադարեցվելու պահից:

8.34 Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի լիազորությունները դադարեցվելու դեպքում լիազորությունները ստանձնում է Փաստաբանների պալատի նոր նախագահը, իսկ այդպիսիք չլինելու դեպքում Փաստաբանների պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարը:

8.35 Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝
1) Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.
2) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ նրա կողմից անհարգելի պատճառով և անընդմեջ Փաստաբանական դպրոցի խորհրդի չորս նիստերին բացակայելու դեպքում՝ Փաստաբանական դպրոցի խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.
3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.
4) նրա մահվան դեպքում.
5) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.
6) եթե նա նշանակվել է ի պաշտոնե՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու կամ նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքում:

8.36 Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, ոչ ուշ, քան Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին Փաստաբանական դպրոցի տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

8.37 Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում Փաստաբանական դպրոցի տնօրենը տեղեկացնում է Փաստաբանների պալատի խորհրդին:

IX. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ

9.1 Փաստաբանական դպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Փաստաբանական դպրոցի տնօրենը:

9.2 Փաստաբանական դպրոցի տնօրենին սույն կանոնադրությամբ սահմանված կարգով պաշտոնի է նշանակում Փաստաբանական դպրոցի խորհուրդը՝ Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի առաջարկությամբ:

9.3 Փաստաբանական դպրոցի տնօրենի պաշտոնին կարող է նշանակվել ցանկացած անձ, ով ունի բարձրագույն իրավաբանական կրթություն: Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի կողմից նախապատվությունը տրվում է փաստաբան թեկնածուին:

9.4 Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի առաջադրված տնօրենի թեկնածությունը չընդունվելու դեպքում Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահը քսան օրվա ընթացքում առաջադրում է այլ թեկնածու:

9.5 Փաստաբանական դպրոցի տնօրենին սույն կանոնադրության 9.6-րդ կետով սահմանված պայմաններից մեկի առկայության դեպքում պաշտոնից է ազատում Փաստաբանական դպրոցի խորհուրդը՝ Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահի առաջարկությամբ: Սույն կետով նախատեսված դեպքում Փաստաբանական դպրոցի խորհուրդը արտահերթ նիստ է գումարում սույն կանոնադրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ:

9.6 Փաստաբանական դպրոցի տնօրենը պաշտոնից կարող է ազատվել, եթե՝

1) առկա են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված հիմքերը.

2) սույն կանոնադրությամբ սահմանված պարբերականությամբ Փաստաբանական դպրոցի խորհրդին անհարգելի պատճառներով չի ներկայացրել իր հաշվետվությունը.

3) նա խախտել է սույն կանոնադրության 9.12-րդ կետի պահանջը:

9.7 Փաստաբանական դպրոցի տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և լուծում է Փաստաբանական դպրոցի խորհրդի նախագահը:

Փաստաբանական դպրոցի տնօրենի լիազորությունները

9.8 Փաստաբանական դպրոցի տնօրենի լիազորությունները սահմանվում են Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

9.9 Փաստաբանական դպրոցի տնօրենի իրավասությանն են պատկանում Փաստաբանական դպրոցի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Օրենքով, «Հիմնադրամների մասին» և սույն կանոնադրությամբ՝ Փաստաբանական դպրոցի խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի:

9.10 Փաստաբանական դպրոցի տնօրենը՝

1) ղեկավարում է Փաստաբանական դպրոցի կողմից իրականացվող ուսուցման և փաստաբանների շարունակական վերապատրաստման գործընթացները.

2) մշակում և Փաստաբանական դպրոցի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Փաստաբանական դպրոցի ռազմավարական ծրագրերը.

3) մշակում և Փաստաբանական դպրոցի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Փաստաբանական դպրոցի տարեկան բյուջեն՝ ըստ հոդվածների, ինչպես նաև

դրա փոփոխությունները.

4) յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին մշակում և Փաստաբանական դպրոցի խորհրդի հաստատմանն է ներկայացնում հաշվետվությունները.
5) մշակում և Փաստաբանական դպրոցի խորհրդի հաստատմանն է ներկայացնում ունկնդրի հավակնորդի կողմից վճարվող գումարների չափը, ունկնդիրների ուսման վարձի չափը և դրանց վճարման կարգերը.
6) մշակում և Փաստաբանական դպրոցի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Փաստաբանական դպրոցի բնականոն գործունեությունը ապահովող ներքին իրավական ակտերը, այդ թվում Փաստաբանական դպրոցի աշխատանքային ներքին կանոնակարգը և աշխատակազմի հաստիքացուցակը.
7) մշակում և Փաստաբանական դպրոցի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Փաստաբանների պալատի խորհրդի հաստատած ուղենիշներին համապատասխան փաստաբանների վերապատրաստման և հավակնորդների ուսուցման ծրագրերը.
8) կազմակերպում է Փաստաբանական դպրոցի խորհրդի որոշումների կատարումը.
9) Փաստաբանական դպրոցի քննարկմանը և լուծմանն է ներկայացնում ունկնդրի հեռացման հարցը.
10) Փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով ունկնդրին ենթարկում է կարգապահական պատասխանատվության.
11) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է փաստաբանական դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Փաստաբանական դպրոցի անունից.
12) ներկայացնում է Փաստաբանական դպրոցը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
13) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
14) գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագրեր.
15) բանկերում բացում է Փաստաբանական դպրոցի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
16) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Փաստաբանական դպրոցի աշխատակիցներին.
17) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
18) խորհրդատվական ձայնով մասնակցում է փաստաբանական դպրոցի խորհրդի նիստերին.
19) իրականացնում է Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

9.11 Փաստաբանական դպրոցի տնօրենն իր բացակայության ժամանակ իր

պարտականությունների կատարումը կարող է դնել աշխատակազմի անդամի վրա:

9.12 Փաստաբանական դպրոցի տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Փաստաբանների դպրոցի խորհրդի համաձայնությամբ:

9.13 Փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից այլ կազմակերպությունում աշխատելը կամ փաստաբանական գործունեություն իրականացնելը չպետք է խոչընդոտի դպրոցի տնօրենի պարտականությունների կատարմանը:

X. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՆԿՆԴՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

10.1 Փաստաբանական դպրոցի ունկնդիր (այսուհետ՝ ունկնդիր) կարող է լինել այն գործունակ ֆիզիկական անձը (դիմորդը), որն ունի բարձրագույն իրավաբանական կրթություն, բացառությամբ, երբ նա դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

10.2 Ունկնդիրների քանակական կազմը, ինչպես նաև ընդունելության քննությունների անցողիկ միավորների նվազագույն շեմը՝ յուրաքանչյուր տարի սահմանում է Փաստաբանական դպրոցի խորհուրդը՝ Փաստաբանական դպրոցի տնօրենի ներկայացմամբ:

10.3 Փաստաբանական դպրոցի ընդունելության քննությունները անցկացնում է Փաստաբանական դպրոցը իր աշխատակազմից ձևավորելով ժամանակավոր հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

10.4 Փաստաբանական դպրոցի ընդունելության քննությունների և Հանձնաժողովի ձևավորման կարգը սահմանում է Փաստաբանական դպրոցի խորհուրդը:

10.5 Սույն կանոնադրության 10.1-րդ կետով նախատեսված անձը ունկնդրի կարգավիճակ է ձեռք բերում, եթե նա հաղթահարել է Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից սահմանած անցողիկ միավորների նվազագույն շեմը և առավելագույն միավորներ ստանալով ընդգրկվել է Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից սահմանած ունկնդիրների քանակական կազմում: Եթե անցողիկ վերջին տեղին հավակնում են հավասար միավորներ ստացած մեկից ավելի ունկնդրի հավակնորդներ, ապա բոլոր այդ ունկնդիրների հավակնորդները ևս ձեռք են բերում ունկնդրի կարգավիճակ:

Փաստաբանական դպրոցի ունկնդրի իրավունքները և պարտականությունները

10.6 Փաստաբանական դպրոցում ուսուցում անցնող ունկնդիրը իրավունք ունի՝

1) ստանալու գիտության, տեխնիկայի եւ մշակույթի ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ, հաճախելու Փաստաբանական դպրոցում կարդացվող դասախոսություններին.
2) Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից սահմանված կարգով ընդգրկվելու և մասնակցելու Փաստաբանական դպրոցի համապատասխան մարմինների աշխատանքներին.
3) օգտվելու Փաստաբանական դպրոցի գրադարանից, լաբորատորիաներից,

տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական և այլ ստորաբաժանումների ծառայություններից.

4) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու Փաստաբանական դպրոցում անցկացվող գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին եւ գիտաժողովներին.

5) միավորվել խորհուրդներում, գիտական ընկերություններում և այլ կազմակերպություններում.

6) բողոքարկելու Փաստաբանական դպրոցի տնօրենի հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.

7) Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից սահմանված դեպքում օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Փաստաբանական դպրոցի կողմից սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակը, դրամաշնորհը, ինչպես նաև ուսման համար վարկ.

9) ծանոթանալու Փաստաբանական դպրոցի կանոնադրությանը և ուսուցմանը վերաբերող ներքին իրավական ակտերին.

10) Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու արձակուրդ, այդ թվում նաև ակադեմիական արձակուրդ.

11) ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու նյութական և (կամ) այլ խրախուսանք.

12) Փաստաբանական դպրոցում ուսուցում անցնող ունկնդիրն ունի նաև Օրենքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

10.7 Արգելվում է ունկնդիրներին արտաուսումնական աշխատանքում ներգրավելը, բացառությամբ Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից սահմանված և ունկնդրի գրավոր համաձայնության դեպքում:

10.8 Փաստաբանական դպրոցում ուսուցում անցնող ունկնդիրը պարտավոր է՝

1) հաճախել Փաստաբանական դպրոցում կազմակերպվող դասընթացներին.

2) մասնակցել գործնական ուսուցմանը (փորձաշրջանին).

3) պահպանել Փաստաբանական դպրոցի կանոնադրության և ներքին իրավական այլ ակտերի պահանջները.

4) կատարել Փաստաբանական դպրոցի մարմինների որոշումները և ներքին իրավական այլ ակտերը.

5) սահմանված ժամկետներում կատարել իրենց տրված բոլոր ուսումնական առաջադրանքները.

6) բարձր պահել Փաստաբանական դպրոցի պատիվն ու հեղինակությունը.

10.9 Փաստաբանական դպրոցում կրթություն ստացող ունկնդիրները պարտավոր են Փաստաբանական դպրոցի հետ կնքել Փաստաբանական դպրոցում ուսուցումը անցնելու վերաբերյալ պայմանագիր և որի համաձայն կատարել վճարումներ:

XI. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

11.1 Ունկնդիրը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի, սույն կանոնադրության և ներքին կարգապահական կանոնների պահանջները խախտելու դեպքերում:

11.2 Ունկնդրի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը սահմանվում է Օրենքով և սույն կանոնադրությամբ:

11.3 Ունկնդրի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման ընթացակարգերը սահմանվում են Փաստաբանական դպրոցի ներքին կարգապահական կանոններով:

11.4 Կարգապահական վարույթը հարուցվում է ունկնդրի կողմից կարգապահական խախտման վերաբերյալ համապատասխան դիմումի (զեկուցագրի) հիման վրա կամ Փաստաբանական դպրոցի տնօրենի նախաձեռնությամբ:

11.5 Կարգապահական վարույթի արդյունքներով ունկնդրի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժերի հետևյալ տեսակները՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) Փաստաբանական դպրոցից հեռացում:

11.6 Կարգապահական տույժերը, բացի դպրոցի հեռացումից, նշանակում է փաստաբանական դպրոցի տնօրենը: Անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում Փաստաբանական դպրոցի տնօրենը դիմում է Փաստաբանական դպրոցի խորհրդին՝ ունկնդրի նկատմամբ Փաստաբանական դպրոցից հեռացումը որպես տույժ կիրառելու միջնորդությամբ:

11.7 Մինչև կարգապահական տույժի կիրառումը Փաստաբանական դպրոցի տնօրենն ունկնդրից պետք է պահանջի գրավոր բացատրություն: Ունկնդրի կողմից բացատրություն տալուց հրաժարվելու դեպքում Փաստաբանական դպրոցի տնօրենը կազմում է համապատասխան ակտ, որտեղ պետք է նշվեն բացատրություն տալու հրաժարվելու պատճառները, եթե այդպիսիք առկա են:

11.8 Կարգապահական տույժը կարող է կիրառվել արարքի բացահայտումից ոչ ուշ, քան մեկ ամսվա և կատարումից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում՝ չհաշված ունկնդրի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը:

11.9 Փաստաբանական դպրոցից որպես կարգապահական տույժ հեռացված ունկնդիրը զրկվում է երկու տարվա ընթացքում Փաստաբանական դպրոց կրկին ընդունվելու իրավունքից:

11.10 Ունկնդիրը կարող է իր նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին Փաստաբանական դպրոցի տնօրենի որոշումը բողոքարկել Փաստաբանական դպրոցի խորհրդին՝ որոշումը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում: Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից ունկնդրի բողոքը մերժելու դեպքում ունկնդիրն իրավունք ունի այն բողոքարկելու դատարան՝ որոշումը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում:

11.11 Ունկնդիրը կարող է իր նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին Փաստաբանական դպրոցի խորհրդի որոշումը բողոքարկել դատարան՝ որոշումը ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում:

XII. ՈՒՆԿՆԴՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

12.1 Ունկնդրի ուսուցման կրթական ծրագրերը իրականացվում են փաստաբանական գործունեությամբ զբաղվելու համար կրթական պահանջմունքները բավարարման նպատակով:

12.2 Փաստաբանական դպրոցում կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար) կարգով:

12.3 Իրավաբանի՝ առնվազն հինգ տարվա մասնագիտական ստաժ ունեցող ունկնդրի ուսուցումը իրականացվում է պարզեցված ընթացակարգով, իսկ մնացած ունկնդիրները ուսուցումը անցնում են ընդհանուր ընթացակարգով:

12.4 Փաստաբանական դպրոցում պարզեցված ընթացակարգով ուսուցման տևողությունը վեց ամիս է, իսկ ընդհանուր ընթացակարգով մեկ տարի:

12.5 Փաստաբանական դպրոցում ուսուցումն իրականացվում է երկու փուլով՝ տեսական ուսուցում և գործնական ուսուցում (փորձաշրջան):

12.6 Փաստաբանական դպրոցի խորհուրդը կարող է սահմանել ունկնդրի գիտելիքների գնահատման համակարգ: Բացասական գնահատական ստացած ունկնդիրը հեռացվում է փաստաբանական դպրոցից և չի անցնում փորձաշրջան: Այդ դեպքում ուսման համար վճարած վարձավճարը չի վերադարձվում:

12.7 Ուսուցումը սկսվում է ընդունելության քննությունների արդյունքների ամփոփումից հետո՝ Փաստաբանական դպրոցի խորհրդի որոշմամբ հայտարարված օրվանից:

12.8 Ուսումնական ծրագրերի ժամանակացույցը սահմանում է Փաստաբանական դպրոցի խորհուրդը:

12.9 Ունկնդրին Փաստաբանական դպրոցի խորհուրդը Փաստաբանական դպրոցի տնօրենի ներկայացմամբ հեռացնում է Փաստաբանական դպրոցից սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև հետևյալ դեպքերում՝

1) ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում.
2) եթե նա տեսական ուսուցման ընթացքում, անհարգելի պատճառով, 16 ակադեմիական ժամի չափով բացակայել է դասերից.
3) փորձաշրջանի անցկացման վայրում անհարգելի բացակայությունները կազմել են 40 և ավելի աշխատանքային ժամ:

Տեսական ուսուցումը և փորձաշրջանի անցկացումը

12.10 Փաստաբանական դպրոցում տեսական ուսուցումը կազմակերպվում է գործնական (սեմինար) պարապունքների, պրակտիկ աշխատանքների, խորհրդատվության, ուսումնական և արդի այլ եղանակներով:

12.11 Ունկնդիրների ուսուցումը Փաստաբանական դպրոցում անցկացնում են դասախոսները:

12.12 Փորձաշրջանի անցկացման կարգը սահմանվում է սույն կանոնադրությամբ:

12.13 Բոլոր ունկնդիրների համար փորձաշրջան անցնելը պարտադիր է:

12.14 Ունկնդիրը փորձաշրջանը կարող է անցնել ինչպես փաստաբանական գրասենյակում, այդպես էլ Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից սահմանված այլ հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն):

12.15 Ունկնդրի փորձաշրջանը փաստաբանական գրասենյակում անցնում է

փաստաբան-ղեկավարի, իսկ Հաստատությունում այլ ղեկավարի մոտ:

12.16 Փաստաբան-ղեկավարը կամ ղեկավարը պարտավոր է ունկնդրի փարձաշրջանը կազմակերպել Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից սահմանված ծրագրերին համապատասխան:

12.17 Ունկնդրի կողմից փորձաշրջան անցնելու վերահսկողությունը իրականացնում է փորձաշրջանի-ղեկավարը:

12.18 Փորձաշրջանի ղեկավարը Փաստաբանական դպրոցի տնօրենի կողմից նշանակված անձն է: Փորձաշրջանի-ղեկավար կարող է նշանակվել ինչպես Փաստաբանական դպրոցի դասախոսը, այնպես էլ այլ անձ:

12.19 Փորձաշրջանի ղեկավարը կարող է միաժամանակ վերահսկողություն իրականացնել մի քանի ունկնդիրների նկատմամբ:

12.20 Փորձաշրջանի արդյունքները ամփոփվում են թեստավորման միջոցով: Թեստավորման անցկացման կարգը և ժամկետները սահմանում է Փաստաբանական դպրոցի խորհուրդը:

12.21 Թեստավորման արդյունքներով բացասական գնահատական ստացած ունկնդիրը զրկվում է որակավորման քննություններին մասնակցելու իրավունքից: Այդ դեպքում ուսման համար վճարած վարձավճարը չի վերադարձվում:

12.22 Թեստավորման արդյունքներով բացասական գնահատական ստանալու արդյունքում որակավորման քննություններին մասնակցելու իրավունքից զրկված ունկնդիրն իրավունք ունի անմիջապես հաջորդող փորձաշրջանի ընթացքում ևս մեկ անգամ ընդհանուր կարգով անցնել փորձաշրջան՝ Փաստաբանական դպրոցի խորհրդի կողմից սահմանված վճարումը կատարելու պայմանով: Երկրորդ անգամ փորձաշրջանի արդյունքներով թեստավորման բացասական գնահատական ստացած ունկնդիրը վերստին կարող է մասնակցել որակավորման քննությանը փաստաբանական դպրոցում ընդհանուր հիմունքներով կրկին անգամ ուսուցում անցնելու դեպքում:

12.23 Փաստաբանական դպրոցի կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած ունկնդիրներին տրվում է Փաստաբանական դպրոցի ավարտական փաստաթուղթ՝ հավաստագիր:

XIII. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13.1 Որակավորման քննությունը փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու միասնական քննությունն է, որին մասնակցելու իրավունք ունեն միայն փաստաբանական դպրոցում համապատասխան ուսուցում անցած՝ Փաստաբանական դպրոցի ավարտական փաստաթուղթ ունեցող ունկնդիրները:

13.2 Փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման քննություններն ընդունում է փաստաբանների պալատի որակավոման հանձնաժողովը: Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի աշխատանքներին նյութական, տեխնիկական և անհրաժեշտ այլ աջակցություն է ցուցաբերում Փաստաբանական դպրոցը: Փաստաբանների պալատի խորհուրդն ընդունում է որոշում, որով էլ սահմանվում են որակավորման քննության չափանիշները (ուղենիշները), ինչպես նաև որակավորման քննության անցկացման հետևյալ ձևերից մեկը կամ մի քանիսը՝ հարցաշարեր, թեստեր, խնդիրներ:

13.3 Որակավորման քննություններն անցկացվում է Օրենքով, Փաստաբանների պալատի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կողմից:

13.4 Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգը սահմանում է Փաստաբանների պալատի խորհուրդը:

13.5 Որակավորման քննությանը չմասնակցած կամ որակավորման քննությունները չհանձնած ունկնդիրը վերստին որակավորման քննություն հանձնելու համար պարտավոր է փաստաբանական դպրոցում անցնել հատուկ ծրագրով ուսուցում, բացառությամբ, երբ նա չի մասնակցել որակավորման քննությանը հարգելի պատճառներով: Երկրորդ անգամ որակավորման քննություններ չհանձնած ունկնդիրը վերստին կարող է մասնակցել որակավորման քննությանը փաստաբանական դպրոցում ընդհանուր հիմունքներով կրկին անգամ ուսուցում անցնելու դեպքում:

XIV. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

14.1 Փաստաբանների վերապատրաստման կրթական ծրագրերը իրականացվում են փաստաբանական գործունեությամբ զբաղվող փաստաբանների համար կրթական պահանջմունքների բավարարման նպատակով:

14.2 Մասնագիտական կրթության յուրաքանչյուր մակարդակի շրջանակում լրացուցիչ կրթության հիմնական խնդիրն փաստաբանի մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացումն է:

14.3 Փաստաբանը վերապատրաստումը կարող է անցնել Փաստաբանական դպրոցում կամ Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված այլ հաստատությունում:

14.4 Փաստաբանը պարտավոր է անցնել Փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վերապատրաստման դասընթացներ, որոնց ժամանաքանակը չի կարող երկու տարվա ընթացքում քառասունութ ժամից պակաս լինել:

14.5 Փաստաբանական դպրոցի կողմից կազմակերպվող վերապատրաստման համար գանձվող վճարի չափը և կարգը սահմանում է Փաստաբանների պալատի խորհուրդը՝ Փաստաբանական դպրոցի տնօրենի ներկայացմամբ:

14.6 Փաստաբաններն ունեն առաջարկվող վերապատրաստման դասընթացների ընտրության իրավունք՝ Փաստաբանների պալատի խորհրդի սահմանած պահանջներին համապատասխան:

14.7 Փաստաբանը Փաստաբանական դպրոցում վերապատրաստում անցնելիս օգտվում է բոլոր այն իրավունքներով, որոնք սույն կանոնադրությամբ վերապահված են ունկնդրին:

XV. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

15.1 Փաստաբանական դպրոցի խորհրդի որոշմամբ անկախ աուդիտորը

նվազագույնը տարին մեկ անգամ պետք է իրականացնի Փաստաբանական դպրոցի ֆինանսական գործունեության աուդիտը (հերթական աուդիտ)։

15.2 Փաստաբանական դպրոցի աուդիտը չի կարող իրականացվել անընդմեջ նույն անձի (աուդիտորի) կողմից։

15.3 Փաստաբանական դպրոցի խորհրդի որոշմամբ կարող է անցկացվել նաև արտահերթ աուդիտորական ստուգում։

15.4 Փաստաբանական դպրոցի նկատմամբ «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը։ Այլ պետական մարմինները Փաստաբանական դպրոցի գործունեության ստուգումներ և ուսումնասիրություններ կարող են իրականացնել իրենց իրավասությունների շրջանակներում՝ օրենքով սահմանված ընթացակարգով։

XVI. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

16.1 Փաստաբանական դպրոցը յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող մարտի 25-ից ոչ ուշ իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տեղեկություններ հրապարակող մամուլում պարտավոր է հրապարակել՝

1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից սահմանված ձևի հաշվետվություն իր գործունեության մասին։ Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ իրականացված ծրագրերի, ֆինանսավորման աղբյուրների, ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի և դրանցում կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափի, Փաստաբանական դպրոցի խորհրդի անդամների, Փաստաբանական դպրոցի տնօրենի և Փաստաբանական դպրոցի աշխատակազմում ընդգրկված անձանց անուններն ու ազգանունները, եթե նրանք օգտվել են Փաստաբանական դպրոցի միջոցներից և ծառայություններից հաշվետու տարվա ընթացքում,

2) ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը, եթե հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն դրամը։

16.2 Փաստաբանական դպրոցը սույն Կանոնադրությամբ սահմանված հաշվետվությունը հրապարակելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, այդ մասին գրավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ գրությանը կից ներկայացնելով հաշվետվությունը հրապարակած մամուլի միջոցի օրինակը։

XVII. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՒՅՔԸ, ԴՐԱ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

17.1 Փաստաբանական դպրոցի սկզբնական միջոցներն են Փաստաբանների պալատի կողմից ստեղծման պահին փոխանցված նյութական և (կամ)

ֆինանսական միջոցները:

17.2 Փաստաբանական դպրոցի գույքը տնօրինում է Փաստաբանական դպրոցի տնօրենը՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

17.3 Փաստաբանների պալատի կողմից Փաստաբանական դպրոցին հանձնված գույքը Փաստաբանական դպրոցի սեփականությունն է: Փաստաբանական դպրոցն այդ գույքը կարող է օգտագործել միայն իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

17.4 Փաստաբանական դպրոցի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) Փաստաբանական պալատի ներդրումը,
2) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,
3) դրամական մուտքերը պետական բյուջեից,
4) դրամաշնորհները,
5) փաստաբաններից և ունկնդիրներից ստացված վերապատրաստման կամ ուսման վճարը,
6) Փաստաբանական դպրոցի կողմից իրականացված կրթական գործունեությունից ստացված եկամուտները,
7) Փաստաբանական դպրոցի կողմից ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
8) հանգանակությունները՝ միջոցներ, որոնք ստացվում են դրանց կուտակմանն ուղղված գործունեությունից,
9) օրենքով չարգելված այլ միջոցներ:

17.5 Հանգանակությունից ստացված միջոցները կարող են ծախսվել միայն այն նպատակով, որը հայտարարվել էր նախապես:

17.6 Փաստաբանական դպրոցն «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով իր հայեցողությամբ տիրապետում, տնօրինում և օգտագործում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

17.7 Փաստաբանական դպրոցի գույքը վաճառելու կամ ձեռք բերելու կամ այլ գործարք կատարելու դեպքում, եթե գույքի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, ապա Փաստաբանական դպրոցի տնօրենը պետք է նախապես ստանա Փաստաբանական դպրոցի խորհրդի որոշումը (թույլտվությունը), եթե նման գործարք նախատեսված չէ Փաստաբանական դպրոցի բյուջեով:

XVIII. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

18.1 Փաստաբանական դպրոցի չի կարող վերակազմակերպվել:

18.2 Փաստաբանական դպրոցի լուծարումը հանգեցնում է դրա դադարմանը՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

18.3 Փաստաբանական դպրոցը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

18.4 Փաստաբանական դպրոցը կարող է լուծարվել, եթե՝

1) Փաստաբանական դպրոցի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար, և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.
2) իր գործունեությամբ Փաստաբանական դպրոցը շեղվել է կանոնադրությամբ նախատեսված նպատակներից.
3) հնարավոր չէ հասնել Փաստաբանական դպրոցի նպատակներին և կատարել այդ նպատակների փոփոխություններ.
4) Փաստաբանական դպրոցի գործունեությունը վտանգում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները.
5) Փաստաբանական դպրոցը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.
6) Փաստաբանական դպրոցը ստեղծելիս հիմնադիրը թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ:

18.5 Դատարանի կողմից Փաստաբանական դպրոցի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո Փաստաբանական դպրոցի խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող) և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և “Հիմնադրամների մասին” ՀՀ օրենքի համաձայն՝ սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:

18.6 Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Փաստաբանական դպրոցի գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող Փաստաբանական դպրոցի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

18.7 Լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

18.8 Լուծարման հանձնաժողովն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղում հիմնադրամի լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից, որը համարվում է Փաստաբանական դպրոցի լուծարման գործընթացի սկիզբ:

18.9 Լուծարման հանձնաժողովն իրականացնում է գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Փաստաբանական դպրոցը լուծարման մասին:

18.10 Լուծարման ընթացքում Փաստաբանական դպրոցն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միայն իր

պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում:

18.11 Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին:

18.12 Միջանկյալ լուծարման հաշվեկշիռը հաստատում է Փաստաբանական դպրոցի Խորհուրդը:

18.13 Միջանկյալ լուծարման հաշվեկշռի հաստատվելուց հետո, եթե լուծարվող Հիմնադրամի ունեցած դրամական միջոցներն անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը, Օրենքով սահմանված կարգով, հրապարակային սակարկություններով իրականացնում է Փաստաբանական դպրոցի գույքի վաճառքը:

18.14 Լուծարման հանձնաժողովը լուծարվող Փաստաբանական դպրոցի պարտատերերին վճարումներ է կատարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ և միջանկյալ լուծարման հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման պահից:

18.15 Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Փաստաբանական դպրոցը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է Փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին (Փաստաբանների պալատի կողմից ստեղծվող ոչ առևտրային այլ կազմակերպությանը), իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

18.16 Փաստաբանական դպրոցի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում է ներկայացնում Փաստաբանական դպրոցի խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնաժողովը Փաստաբանական դպրոցի Խորհրդի հաստատած լուծարման հաշվեկշիռը ներկայացնում է դատարանի հաստատմանը:

18.17 Լուծարման հանձնաժողովը հաստատված լուծարման հաշվեկշիռն օրենքով սահմանված մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է իրավաբանական անձանց պետական ռեգիստր Փաստաբանական դպրոցի լուծարման պետական գրանցում կատարելու համար:

18.18 Փաստաբանական դպրոցի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից:

18.19 Փաստաբանական դպրոցի Խորհրդի կողմից լուծարման հետ կապված սահմանված իր լիազորությունները երկամսյա ժամկետում (համապատասխանաբար դատարանի կողմից որոշման ընդունման, լուծարման հանձնաժողովի կողմից լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի ներկայացման պահից) չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը Փաստաբանական դպրոցի

լուծարման հետ կապված լիազորությունների իրականացման նպատակով երկամսյա ժամկետում նշանակում է ժամանակավոր խորհուրդ: